ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ

ՃՇՏՈՒՄ ՄԸ

«Էջմիածին» ամսագրի 1947 թ. հունվար—փետրվար համարին մեջ զետեղված «Մեսրոպ Թաղիադյան» հոդվածի հեղինակը, հիմնվելով Մ.Նալբանդյանի «ՄեռելաՒարցուկ»-ի մեջ գրած տողերուն վրա, «Տէր կեցո դու զՀայս» բանաստեղծության հեղինակը կներկայացներ զայն (էջ 56)։

«Հայաստանեայց եկեղեցի» (1947 թ. մայիս, էջ 140) նույն սխալը կկրկներ, արտատպելով այս երգը։

Այս հին օրերեն փոխանցված սխալի մասին թեև անգամ մը արտահայտված եմ (Արմաւենի Տարեգիրք, 1938 թ., էջ 116)։ սակայն ինչպես կտեսնվի, ուշադրութենե վրիպած է, ուստի հարկ կդատեմ, հանուն ճշմարտության, այս երկտող բացատրությունը հասցնել խմբագրությանդ։

«Տէր կեցո դու զՀայս» երգը հրատարակված է 1820-ին՝ Կալկաթա հրատարակվող «Հայելի Կալկաբեան» անուն հանդեսին մեջ։ 27 տարիներ վերջը՝ 1847-ին Մեսրոպ Թաղիադյանց, ձեռք անցնելով «Հայելի Կալկաբեան»-ի մի քանի թիվերը, իր հրատարակած «Ազգասէր»-ի մեջ (տես թ. 102) կարտատպե երկու հատվածներ— որոնցմե մեկը «Տէր կեցո դու զՀայս» երգը, անոր տակը դնելով Հ. Կ. սկզբնատառերը, իբրև նշանակ «Հայելի Կալկաբեան»-ի։

Մ. Նալբանդյան ուշադրություն չէ ըրած նույնիսկ Թաղիադյանցի գրած տողերուն և այդ երգը վերագրած է անոր, որ երբեք չէր կրնար ըլլալ այս երգին հեղինակը, վասնզի.

ա) 1820-ին, երբ այս երգը կհրատարակվեր Կալկաթայի մեջ, Մեսրոպ Թաղիադյանց հազիվ 17 տարեկան պատանի մըն էր և կգտնվեր էջմիածին ու ոչ մեկ հարաբերություն ուներ Հնդկաստանի հետ, ուր գացած էր 1823-ին, երգին հրատարակությենեն երեք տարի վերջը.

բ) Այս երգը վստահորեն կրնանք ըսել թե խմբագրված է հետևողականությամբ կամ նմանողությամբ անգլիական ազգային երգին «Տէր կեցո զթագավորը» սկզբնավորությամբ։

Արդ զայն խմբագրողը պետք է անգլերենի գիտակ մեկը եղած ըլլար, մինչ 1820-ին Մեսրոպ Թաղիադյանց բնավ անգլերեն չէր գիտեր, և 1823-ին Հնդկաստան երթալով վերջն էր, որ անգլերենի ծանոթացավ։

Հետևաբար ամեն տարակուսե դուրս է, որ Մեսրոպ Թաղիադյանց չէր այս երգին հեղինակը։

Հարց է, թե ո՞վ էր անոր հեղինակը։

Այս մասին, առանց շատ վստահության, կրնանք ենթադրություն մը ընել։

Հավանորեն զայն խմբագրած է «Հայելի Կալկաբեան»-ի խմբագիրը՝ Հովհաննես Տեր-Հակոբյան, որ կթվի թե անգլերենի գիտակ մեկն էր, վասնզի իր թերթին մեջ բազմաթիվ թարգմանություններ կան այդ լեզվեն։

ԱՐՇԱԿ ԱԼՊՈՅԱՃՅԱՆ

30 Հուլիս 1947 թ.
Դահիրե